**ՎԱՐԴԱՆ ԱԹՈՅԱՆ**
*ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու*

# ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

*Այլևս ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ պետությունները բնական հակառակորդներ են, որոնցից ամեն մեկը ձգտում է տարածվել, ուժեղանալ, շահել հարևանների հաշվին: Հարձակվում է, ով իրեն ուժեղ և պատրաստ է զգում հարձակվելու` լավագույն պաշտպանությունը համարելով նախահարձակությունը: Հարձակվում է նա, ով իր դիմացը թուլություն է տեսնում...*

***Գարեգին Նժդեհ***

Ցանկացած տարածաշրջանի անվտանգության առաջնային և վճռական նախապայմաններից է զինված հակամարտությունների և ռազմական բախումների կանխումը: Պետք է արձանագրել, որ ներկայում, բազմագործոն ազդեցությունների հետևանքով, համաշխարհային հանրությունն ու ազգային պետությունները սպառնալիքների նկատմամբ առավել խոցելի են դառնում: Միջազգային անվտանգության վիճակով է պայմանավորված տարածաշրջանային անվտանգությունը: Ինչպես նշում է Վ. Կուլագինը. «Միջազգային անվտանգության գլոբալ խնդիրներն աստիճանաբար առավել շատ են արտացոլվում տարածաշրջանային անվտանգության համակարգերում: Սակայն տարբեր տարածաշրջաններում դրանք միանման չեն դրսևորվում: Տարածաշրջանային գործընթացների վրա ազդեցություն է ունենում առաջատար տերությունների՝ դրսից պրոյեկտվող քաղաքականությունը: Սակայն այս կամ այն տարածաշրջանում հատուկ նշանակություն ունեն յուրահատուկ տեղային բնույթի խնդիրները, որոնք գլխավորապես կամ բացառապես բնորոշ են որոշակի տարածաշրջանի»[1]:

[1] **Кулагин В.,** Современная международная безопасность: учебное пособие. М., ,,КНОРУС", 2012, с. 93.

Հարավային Կովկասն աշխարհի այն տարածաշրջաններից է, որը բնութագրվում է մի շարք սառեցված հակամարտություններով (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսիա) և էսկալացիոն ներուժով օժտված այլ միջէթնիկական խնդիրներով՝ աջարական, թալիշական, ջավախահայության և այլն: Պետք է արձանագրել նաև, որ համաշխարհային հանրության աչքում Հարավային Կովկասը և ընդհանրապես՝ Կովկասը, վերածվել է վտանգի հավանական աղբյուրի, ինչը ստիպում է առավել մեծ ուշադրությամբ հետևել տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներին և առկա ռիսկերի վերլուծությանը: Այս համատեքստում հետաքրքիր է ք.գ.դ. Լ. Շիրինյանի հետևյալ դիտարկումը. «Անկասկած է, որ Հայաստանի զարգացման, նոր աշխարհակարգի հաստատման տագնապահարույց մեր օրերում նրա անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է.

ա) պատկերացնել համապատասխան ուժային կենտրոնների, երկրների ռազմավարական շահագրգռությունները Հարավային Կովկասում, որտեղ գտնվում են հայկական երկու պետական կազմավորումներն ու Ջավախքը,

բ) իրատեսության շրջանակներում սահմանել (ուրվագծել) ՀՀ երկրառազմավարության գերակայությունները»[2]:

Պետք է նշել, որ պատմության բոլոր փուլերում Կովկասյան տարածաշրջանը, պայմանավորված աշխարհագրական դիրքով և բնական հարստություններով, մշտապես գտնվել է տարբեր ուժային կենտրոնների հետաքրքրությունների կիզակետում: Աշխարհաքաղաքական իմաստով Կովկասը չափազանց կարևոր հանգույց է հարավ-հյուսիս, արևելք-արևմուտք ռազմավարական ուղղություններում: Կովկասյան տարածաշրջանում վերահսկողությունը հնարավորություն է ընձեռում վերահսկելու առավել ընդարձակ տարածքներ Եվրասիայում: Ինչպես նշում է հայտնի քաղաքագետ Կ. Գաջիևը՝ Կովկասը դարձավ ռազմական դիմակայության սահմանագիծ նախ Բյուզանդիայի և Պարսկական կայսրության, այնուհետև Բյուզանդիայի, արաբների և թյուրքերի միջև, իսկ նոր ժամանակներում՝ Ռուսաստանի և օսմանյան Թուրքիայի ու սեֆևիդյան Իրանի միջև բազմաթիվ պատերազմների թատերաբեմ[3]:

Խնդրի վերլուծության համատեքստում հատկանշական է նաև Թեհրանում «Ալիք» հայկական թերթի հիմնադիր Ի. Թադևոսյանի՝ դեռևս նախորդ դարի 30-ական թվականներին գրած հոդվածում տեղ գտած դիտարկումը. «….Կովկասում խաչվում և բախվում են Ռուսաստանի, Թուրքիայի, Անգլիայի, Գերմանիայի և Իտալիայի տնտեսական և քաղաքական շահերը: Կովկասը, գտնվելով Ռուսաստանի՝ Մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքի և ճակատագրի վրա տնտեսական և քաղաքական տիրապետության հաստատման ճանապարհին, Ռուսաստանի՝ հարավային տաք Հնդկական օվկիանոսի ափերին հասնելու ճանապարհին, վերջին երկու հարյուրամյակում հատկապես կարևոր տեղ էր զբաղեցնում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունում. 1828 թ. առ այսօր»[4]:

---

[2] **Լ. Շիրինյան,** Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Եր., 2010, էջ 154:
[3] Տե՛ս **Гаджиев К.,** Геополитика Кавказа. М., ,,Международные отношения”, 2003, էջ 37-38:
[4] **Тадевосян И.,** Национальный вопрос на Кавказе. Ер., ,,Тигран Мец”, 2007, с. 5.

Այո՛, երբեմն փոխվում են դերակատարները, իսկ էությունը՝ ո՛չ: Կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի հետապնդած նպատակների համատեքստում բնութագրական է նաև Ն. Պոկրովսկու դիտարկումը. «....ինքնակալությունը Կովկաս է եկել երկու խնդրով. գրավել ռուս կալվածատիրոջ համար կովկասյան բերրի հողերը և ապահովել ռուս վաճառականին առևտրային ուղիներով»[5]:

Հարկ է ընդգծել, որ Կովկասը (այդ թվում՝ Հարավային Կովկասը), որպես բարդ և բազմաշերտ համակարգ, բազմաթիվ ազգերի, կրոնների և մշակույթների խճանկար է: Տարածաշրջանում աշխարհաքաղաքական ներկա իրավիճակը վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն առանցքային տեղ է գրավում Եվրասիայում, որով էլ բացատրվում է այստեղ բազմաթիվ ուժային կենտրոնների ակտիվությունը՝ ուղղակիորեն անդրադառնալով քաղաքական դերակատարների միջև հակոտնյա կամ բարեկամական հարաբերությունների ձևավորման վրա: Ինչպես նշում է Ս. Կորնելը. «Կովկասում կենտրոնացվող ռազմավարական արգելափակումը չի կարող ամբողջությամբ գիտակցվել՝ առանց առավել լայն՝ Եվրասիայի մասշտաբով ռազմավարական արգելափակման մեջ դրա դերը գնահատելու»[6]:

Դ. Էյվազովի գնահատմամբ՝ Կովկասի համար Եվրասիական տերությունների հակամարտությունը տեղի էր ունենում տարածաշրջանում միավորող ներքին ուժի բացակայության, էթնիկական և կրոնական խայտաբղետության, պառակտվածության, մշտական երկպառակության առկայության պայմաններում, որոնք նկատելիորեն թուլացնում էին տարածաշրջանը, դրանով էլ մեծացնում արտաքին միջամտության հնարավորությունները[7]:

Փաստ է, որ «սառը պատերազմի» ավարտից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը և տեղեկատվական, համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում արձանագրված աննախադեպ առաջընթացը հանգեցրին մի կողմից՝ համաշխարհային հասարակության (առաջին հերթին՝ սոցիոմշակութային և տնտեսական առումով), մյուս կողմից՝ միաբևեռ աշխարհակարգի ձևավորմանը՝ ԱՄՆ-ի ակնհայտ գերակայությամբ:

Ակնհայտ է, որ 21-րդ դարասկզբին աշխարհաքաղաքական գործընթացները ծեռք են բերում բոլորովին նոր բնույթ և որակապես այլ բովանդակություն: Սակայն նոր աշխարհակարգը ոչ միայն չի նվազեցնում (առավել ևս՝ վերացնում), այլ հակառակը՝ ավելացնում է ռիսկածին գործոնները, որոնց մեջ առանձնանում են պահաբեկչական, այդ թվում՝ կիբեռահաբեկչական սպառնալիքները, որոնք մանրակրկիտ վերլուծության և բազմակողմանի քննարկման կարիք ունեն: Նշենք միայն հետևյալը. աշխարհում և, մասնավորապես, մեր տարածաշրջանում ռիսկածին գործոններից մեկը դառնում է հենց համընդգրկուն աշխարհակարգի և «բաց հասարակության» «հաղթարշավի» պայմաններում ազգային պետությունների սեփական դիրքերի կորուստը: Իրավիճակը, երբ ազգային անվտանգության ապահովման պետական համակարգը համաշխարհային գործընթացների հետևանքով արդեն նախկինի պես արդյունավետ չէ, անհանգստացնող վակուում է ստեղծվում,

[5] **Покровский Н.,** Кавказские войны и Имамат Шамиля. М., 2000, с. 103.
[6] **Cornell S.,** Small Nations and Great Powers. A Study of Ethnopolitical Conflict in the Caucasus // Curzon Press, Caucasus World, 2001, p. 399.
[7] Տե՛ս **Эйвазов Д.,** Геополитические уроки постсоветского Кавказа: путь к глобализации или возвращение к классической Евразийской геополитике? // Кавказ и глобализация, 2006, т. 1, № 1, էջ 28:

որից կարող են օգտվել տարբեր արմատական, ծայրահեղական և ահաբեկչական խմբավորումներ:

Հարկ է ընդգծել, որ համաշխարհայնացումը լրջորեն վերափոխել է հին աշխարհակարգը՝ թափանցիկ դարձնելով ազգային սահմանները և նոր որակ ու բովանդակություն հաղորդելով յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության ապահովման խնդիրներին: Այս հիմնախնդիրը հատուկ սրություն է ձեռք բերում նաև Հարավային Կովկասի տարածաշրջանում՝ սոցիալ-պատմական, տնտեսական, մշակութային և քաղաքական յուրահատկություններով պայմանավորված:

Գաղտնիք չէ, որ Հարավային Կովկասը արտաքին ուժերի մրցակցության և դիմակայության դաշտի է վերածվել, որոնցից յուրաքանչյուրն այստեղ հետապնդում է իր շահերն ու նպատակները: Այս համատեքստում հարկ է մեջբերել հատված ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետ, ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական, ք.գ.դ., գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի՝ 2012 թ. փետրվարի 2-ին Ջ. Մարշալի անվան կենտրոնի շրջանավարտների Հայկական ասոցիացիայի, Եվրոպական անվտանգության ուսումնասիրման կենտրոնի և ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան կողմից համատեղ կազմակերպված «Հարավային Կովկաս՝ նոր մարտահրավերներ» թեմայով սեմինարին ներկայացրած զեկույցից. ««Արաբական գարնան» դժվար կանխատեսելի զարգացումը, Իրանի միջուկային ծրագրի շուրջ միջազգային լարվածության աճը, իսլամական աշխարհի նկատմամբ Թուրքիայի «նոր-օսմանականության» արտաքին քաղաքականության կերպափոխումը, Կենտրոնական Ասիայում անվտանգային դինամիկայի զարգացման հեռանկարների բարդացումը՝ կապված Աֆղանստանից դաշնադրային զորքերի նախատեսվող դուրսբերման հետ, ինչպես նաև Եվրոպական միության աշխարհառազմավարական տարածքում համակարգային ճգնաժամի խորացումը այն հիմնական արտաքին գործոններն են, որոնք ազդում են Հարավային Կովկասում անվտանգային միջավայրի փոփոխությունների դինամիկայի վրա: Հարավային Կովկասում անվտանգության պահպանման գործում որոշակի դեր է կատարում միջազգային անվտանգության համակարգում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ չափումներով ներգրավվածության դինամիկան: Այստեղ որպես դրական գործոն պետք է նշել հարևանների համեմատությամբ Հայաստանի ավելի մեծ հավասարակշռվածությունը, որը նա ցուցաբերում է իր անվտանգային կողմնորոշումների բազմազանության պահպանման և ՆԱՏՕ-ի ու ՀԱՊԿ-ի, Ռուսաստանի ու ԱՄՆ-ի, այլ համաշխարհային ուժային կենտրոնների, այդ թվում՝ Չինաստանի և Հնդկաստանի, ինչպես նաև Եվրոպայի ու մեծ Մերձավոր Արևելքի երկրների հետ անվտանգային համագործակցության զարգացման ասպարեզում: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Հարավային Կովկասում անվտանգության դինամիկայի վրա ազդում է հենց հարավկովկասյան պետությունների միջև ձևավորված այն հարաբերությունների բարդ համակարգը, որոնք արտացոլում են Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի նկատմամբ նրանց չհամընկնող անվտանգային շահերը: Ռազմավարական հետազոտությունների մեծ թվով կենտրոններ նշում են Մերձավոր Արևելքում ավերիչ տարածաշրջանային պատերազմի բռնկման հավանականության աճը, մի պատերազմի, որի ուղեծրում անխուսափելիորեն կհայտնվի նաև Հարավային Կովկասը: Տարա-

ծաշրջանային իրադրության նման աղետալի զարգացման դեպքում Հայաստանի ազգային անվտանգության համար հիմնական սպառնալիք եղել և մնում է Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի հնարավոր ագրեսիան»[8]:

Խնդրի քննարկման և Հայաստանի անվտանգության ռիսկերի վերլուծության համատեքստում ուշադրության է արժանի նաև «Նորավանք» ԳԿՀ քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ Ս. Սարգսյանի դիտարկումը, ով, վերլուծելով Կովկասյան և Կենտրոնաասիական տարածաշրջանում Ռուսաստանի և Չինաստանի առջև առկա և հեռանկարային մարտահրավերները, դրանցից առանձնացնում է հիմնականները.

- ծայրահեղական և ահաբեկչական խմբավորումների գործունեության ակտիվացումը ՌԴ Հյուսիսային Կովկասում՝ միջազգային իսլամիստական ահաբեկչական կազմակերպությունների կողմից գաղափարախոսական, նյութատեխնիկական և ֆինանսական աջակցության ցուցաբերման պարագայում,
- լիամասշտաբ մարտական գործողությունների վերսկսումը Ղարաբաղյան հակամարտության գոտում,
- լարվածության կտրուկ սրացումը և ռազմական գործողությունները Իրանի Իսլամական Հանրապետության դեմ: Հարավկովկասյան տարածաշրջանի համար ակնհայտ բացասական հետևանքներից բացի, դա զգալի հարված կհասցնի նաև ՉԺՀ տնտեսությանը. Իրանը չինական շուկա նավթ մատակարարող՝ նշանակությամբ երրորդ երկիրն է,
- ջիհադական տրամադրությունների տարածումը Կենտրոնական Ասիայի պետություններում. որպես առավել հավանական սցենար՝ հնարավոր է տարածաշրջանի կամ դրա մի մասի թալիբանացումը, որի հեռանկարներն ավելի իրական կդառնան կոալիցիայի զորքերի՝ 2014 թ. նախատեսված դուրսբերումից հետո,
- Աֆղանստանից և Կենտրոնական Ասիայից թմրանյութերի տեղափոխման ծավալների պահպանումը և անգամ ավելացումը,
- թուրքամետ տրամադրությունների ուժեղացումը էթնիկ թյուրքերով բնակեցված շրջաններում (ինչպես ՌԴ տարածքում, Կենտրոնական Ասիայի պետություններում, այնպես էլ ՉԺՀ ՍՈւԻՇ-ում*),
- «արաբական հեղափոխությունների» տարածումը իսլամամետ և իսլամիստական շարժումների ակտիվացմամբ, ՌԴ որոշ շրջաններում, Հարավային Կովկասի տարածաշրջանում (հիմնականում Ադրբեջանում, ինչպես նաև Վրաստանի ադրբեջանաբնակ շրջաններում), Կենտրոնական Ասիայի պետություններում, նաև Չինաստանում,
- տարածաշրջանի բոլոր երկրների անվտանգությանն սպառնացող տեղեկատվական բնույթի սպառնալիքներ՝ սերտորեն կապված ամենատարբեր ռազմաքաղաքական մարտահրավերների հետ[9]:

Հայաստանի ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից հատուկ մտահոգության առարկա է նաև Ադրբեջանում հայատյացության քարոզչությունը, Հայաստանին պարտադրվող սպառազինությունների մրցա-

---

[8] Տե՛ս http://www.mil.am/files/Final%20Marshall%20Center%20Conference_ARM.pdf

* ՉԺՀ ՍՈւԻՇ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սինցզյան-Ույղուրական ինքնավար շրջան:

[9] Տե՛ս **Ս. Սարգսյան,** ՀԱՊԿ և ՇՀԿ քաղաքականությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում, «ԳԼՈԲՈՒՍ», թիվ 4 (25), 2012, էջ 52-53:

վազքը, հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումը, պատմական փաստերի ակնհայտ կեղծումը և տարածաշրջանում լարվածությունը մեծացնող այլ բացասական երևույթներ: Առկա են մի շարք գործոններ ևս, որոնք նվազեցնում են արցախյան հակամարտության խաղաղ հանգուցալուծման լավատեսական ակնկալիքները: Ինչպես նշում է Կովկասի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների դեպարտամենտի ղեկավար, ք.գ.դ. Ս. Մինասյանը. «Լեռնային Ղարաբաղը վերջին ժամանակներս փորձում է դուրս գալ միջազգային մեկուսացումից և մասնակցել տարածաշրջանային նախագծերին: Փաստորեն, Ղարաբաղի մեկուսացումը միջազգային հանրությունից ընդամենը հեռացնում է Ադրբեջանի հետ հաշտվելու հեռանկարը՝ ղարաբաղցիների մեջ ձևավորելով «պաշարված ամրոցի» սինդրոմը և փոխզիջումների հանդեպ բացասական վերաբերմունքը, որն ապագայում կարող է խորանալ: Ստեփանակերտի նոր օդանավակայանի բացման պարագայում քաղաքացիական ինքնաթիռների դեմ ուժ կիրառելու պաշտոնական Բաքվի սպառնալիքները, Ռամիլ Սաֆարովի և Աքրամ Այլիսլիի աղմուկ հանած պատմությունները նույնպես ղարաբաղյան հասարակության և ԼՂՀ քաղաքական ընտրանու մեջ խորացնում են հակամարտության զարգացման ներկա փուլում Ադրբեջանի հետ փոխզիջումների հնարավորության մասին կասկածները»[10]:

Հայաստանի ազգային, մասնավորապես՝ ռազմական անվտանգության ապահովման գործում ծանրակշիռ դերակատարություն ունի հայ-ռուսական երկկողմ և ՀԱՊԿ շրջանակներում համագործակցությունը: Հայաստանը միակ ՀԱՊԿ անդամ երկիրն է տարածաշրջանում, այստեղ է տեղակայված նաև ՌԴ զինված ուժերի 102-րդ ռազմաբազան, որը մշտապես զսպիչ դեր է կատարել մեր երկրին հատկապես ագրեսիվորեն վերաբերվող մյուս հարևանի՝ Թուրքիայի նկատմամբ: Վերլուծելով Հայաստանում տեղակայված ռուսական զորքերի տարածաշրջանային նշանակությունը և արցախյան հակամարտության տարիներին դրա առկայության կարևորությունը՝ ռուսաստանցի հետազոտողներ Ն. Նարտովը և Վ. Նարտովը նշում են. «Ռուսական զինված ուժերի առկայությունն ապահովում է Հայաստանի անվտանգությունը, նախևառաջ, Թուրքիայից, որը 1915 թ. իրականացրել է հայ ժողովրդի ցեղասպանությունը՝ այդպիսով կանխագործելով հայտնի հոլոքոստը…. Կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ ռուսական զորքերի առկայությունը զսպեց թուրքերին ռազմական գործողություններից, որոնք, ունենալով բարձր հովանավոր՝ ԱՄՆ, գործում են քրդերի դեմ՝ խախտելով միջազգային իրավունքի բոլոր նորմերը»[11]:

Շարունակելով թուրքական սպառնալիքի քննարկումը՝ նշենք, որ վտանգ է ներկայացնում նաև Եվրոմիությանն ինտեգրման և այդ կառույցին անդամագրման Թուրքիայի որդեգրած քաղաքականության տապալման դեպքում վերջինում հնարավոր բացասական զարգացումները մահմեդական ծայրահեղականության դրսևորմամբ: Ինչպես նշում է ամերիկացի հայտնի քաղաքագետ Զ. Բժեզինսկին. «Եթե Թուրքիայի առջև վերջնականապես փակվեն ԵՄ դռները, չի կարելի բացառել այդ երկրում մահմեդական կրոնաքաղա-

[10] **Ս. Մինասյան,** Լեռնային Ղարաբաղ. հայեցակարգային մոտեցումներ կարգավորման հեռանկարներին, «ԳԼՈԲՈՒՍ», թիվ 4 (37), 2013, էջ 16:

[11] **Нартов Н., Нартов В.,** Геополитика: учебник для студентов, обучающихся по специальностям «Государственное и муниципальное управление», «Международные отношения», «Регионоведение» /под ред. Староверова В., 4-е изд., перераб. и доп./. М., ,,ЮНИТИ-ДАНА”, 2007, с. 215.

քական ավանդույթների վերածնունդը և, որպես հետևանք, դրա արմատական (և, հավանաբար, կապված ներքին ցնցումների հետ) միջազգային կուրսի փոփոխությունը: Չարժե թերագնահատել այդ հավանականությունը»[12]:

Տարածաշրջանում Թուրքիայի հավակնությունների վերաբերյալ բավականին զգաստացնող են հնչում նաև Գ. Հարությունյանի դիտարկումները. «Նեոօսմանական գաղափարախոսությունով տոգորված թուրքական քաղաքական վերնախավն ավելի քան ամբիցիոզ է և հավակնում է ստեղծել՝

- «Իսլամական» ՆԱՏՕ և «Իսլամական խաղաղարար ուժեր» (այդպիսով վերակենդանացնելով էրդողանի գաղափարական հայր, նախկին վարչապետ և ռադիկալ իսլամիստ էրբաքանի ծրագրերը),
- միջուկային զենք,
- թուրքական լիրայի տնտեսական գոտի»[13]:

Փաստ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում իրադարձությունների զարգացումը ակնհայտորեն ի ցույց դրեց անվտանգության տեսակետից տարածաշրջանի խոցելիությունը՝ պայմանավորված դեռևս ԽՍՀՄ առաջին տարիներին հանրապետությունների վարչատարածքային բաժանման, միջէթնիկական խնդիրների «կարգավորման» ընթացքում դրված «ականներով»: Մյուս կողմից՝ ինչպես նշում է Կ. Գաջիևը. «Խորհրդային Միության փլուզումը և միացյալ սոցիալական և տնտեսական տարածության ապաինտեգրումը յուրաքանչյուր հետխորհրդային պետությունում ծնեցին բազմաթիվ տնտեսական, սոցիալական, էթնոքաղաքական և այլ սուր խնդիրներ: Անդրկովկասի նորանկախ երկրները ինչպես ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական տեսանկյունից հայտնվեցին որակապես նոր իրավիճակում: Փոփոխվեցին իշխանության համակարգը, գաղափարախոսությունը, հասարակական հարաբերությունները, զարգացման բնույթն ու ուղղությունը, կենսական առաջնահերթությունները, համաշխարհային ընկերակցության կառուցվածքի մեջ տեղն ու դերը և այլն: Դիտարկվող համատեքստում առանցքային նշանակություն ունեն տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները, որոնց չափորոշիչներից և վեկտորներից, ինչպես ենթադրվում է, կախված կլինի տարածաշրջանի՝ ինչպես աշխարհաքաղաքական դիմանկարն ընդհանրապես, այնպես էլ այնտեղ բնակվող յուրաքանչյուր ժողովրդի ճակատագիրը»[14]:

Մեր կարծիքով՝ տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման և քաղաքական հակասությունների հարթեցման ուղիների վերաբերյալ հաճախ հակոտնյա մոտեցումների առկայության պարագայում անվիճելի է այն, որ այստեղ անվտանգության կայուն համակարգի ստեղծման, տնտեսական վերընթաց և երկարաժամկետ զարգացման ապահովման, փոխշահավետ համագործակցության, տնտեսական ինտեգրման ու արդյունավետ գործակցության գրավականը Հարավային Կովկասում առկա միջէթնիկական հակամարտությունների կարգավորումն է: Տարածաշրջանում՝ մասնավորապես Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման մակարդակի հետ կապված, լավատեսական է հնչում ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ն. Բորդյուժայի տեսակետը. «Այն քայլերը, որոնք այսօր արվում են Հայաստանի

---

[12] **Бжезинский З.,** Выбор. Глобальное господство или глобальное лидерство /пер. с англ./. М., ,,Международные  отношения", 2010, с. 82.

[13] **Հարությունյան Գ.**, Հայաստանին ուղղված մարտահրավերները գլոբալացվող աշխարհում, «21-րդ դար», թիվ 6 (46), 2012թ., էջ 8:

[14] **Гаджиев К.,** նշվ. աշխ., էջ 57:

ղեկավարության կողմից անվտանգության ապահովման ազգային համակարգի ձևավորման ուղղությամբ, այն քայլերը, որոնք արվում են ՀԱՊԿ-ի կողմից Հայաստանի անվտանգության ապահովման ուղղությամբ, վկայում են, որ այսօր ստեղծված ողջ համակարգը՝ բաղկացած երեք մակարդակից՝ ազգային, հայ-ռուսական և ՀԱՊԿ, թույլ է տալիս խոսել Հայաստանի անվտանգության ապահովման բավականին բարձր աստիճանի մասին»[15]:

Ամփոփելով նշենք, որ Հարավային Կովկասի անվտանգությանն առնչվող բազմաթիվ ռիսկերն օժտված են տարածաշրջանային իրավիճակը ապակայունացնելու ներուժով: Միաժամանակ, Կովկասը հետխորհրդային ամենաանհանգիստ տարածաշրջաններից է, որտեղ ոչ միայն պահպանվում է բազմաբնույթ հակամարտությունների վերսկսման հավանականությունը, այլ նաև հնարավոր են դիմակայության նոր օջախներ: Պակաս անհանգստության առարկա չէ նաև Կասպից ծովի ռեսուրսների շահագործման շուրջ ստեղծված իրավիճակը, որն անհամաձայնությունների և լարվածության առիթ է դառնում, ինչը նույնպես առանձին քննարկման առարկա է:

Հարավային Կովկասի անվտանգության հաջորդ խնդիրը տարածաշրջանը թմրանյութերի և վերազգային հանցավոր խմբավորումների համար տարանցիկ գոտու վերածման վտանգն է: Ինչպես նշում է Ա. Ոյաբովը, Հարավային Կովկասը դիտարկվում է որպես տարանցիկ շրջան, որի միջոցով Մերձավոր և Միջին Արևելքից Ռուսաստան են ներթափանցում իսլամական ահաբեկչությունը և միջազգային հանցավոր ցանցերը[16]:

Տարածաշրջանի անվտանգության սպառնալիքների աստիճանակարգում էական տեղ է զբաղեցնում փախստականների և միգրացիայի խնդիրը: Միգրացիոն տրամադրությունների վրա մեծապես ազդում են սառեցված հակամարտությունները, ներքաղաքական անկայունությունը, տնտեսական անբավարար զարգացումը, կենսամակարդակի կտրուկ անկումը և հեռանկարի բացակայությունը[17]:

Այսպիսով՝ Հարավային Կովկասում ստեղծված իրադրությունը պահանջում է կառավարչական, գիտական և վերլուծական մտքի կենտրոնացում ինչպես առանձին պետությունների մասշտաբով, այնպես էլ տարածաշրջանում ընդհանուր առմամբ՝ գտնելու արդեն իսկ առկա և նոր ի հայտ եկող մարտահրավերներին համարժեք պատասխանների ամենաարդյունավետ ձևաչափերն ու միջոցները:

---

[15] http://www.azatutyun.am/content/article/25029768.html

[16] Տե՛ս Материалы международной конференции ,,Динамика региональной безопасности на Южном Кавказе". 17-18 ноября 2011, Ер., Академически-исследовательский фонд политических наук, 2012, էջ 114:

[17] Տե՛ս **Малышева Д.,** Проблемы безопасности на Кавказе. http://www.ca-c.org /journal/-2001/journal_rus/cac-01/05.malishr.shtml

**ВАРДАН АТОЯН**
*Директор программы ,,Исследования национальной безопасности” исследовательского центра ,,Амберд” АГЭУ, кандидат экономических наук*

***К вопросу о безопасности Южного Кавказа.-*** При анализе геополитической ситуации Южного Кавказа должен быть принят во внимание тот факт, что регион занимает ключевое место в Евразии. Это в свою очередь объясняет такую активность мировых центров силы в регионе. Вышеупомянутое обстоятельство оказывает непосредственное влияние на деятельность политических акторов региона, в том числе на установление между ними дружеских или враждебных отношений.

В начале 21-го века геополитические процессы приобретают новый характер и иные качества, однако новый мировой порядок не только не снижает (а тем более устраняет) рискогенные факторы в регионе, но и увеличивает их. В статье также рассматриваются другие вопросы, связанные с безопасностью Южного Кавказа и, в частности, проблемы обеспечения национальной безопасности Армении.

В заключении делается вывод, что многие из существующих рисков безопасности в регионе имеют реальный потенциал дестабилизации ситуации на Южном Кавказе. Одновременно ситуация осложняется тем, что существуют также ,,инерционные” риски, которые актуальны уже на протяжении десятилетий.

VARDAN ATOYAN
*Director of ,,National Security Research” Programme at ,,Amberd” Research Center, ASUE, PhD in Economics*

***On Security Issues of the South Caucasus.-*** The Caucasus (including Southern Caucasus) as a complex and multi-layered system consists of various nations, religions and cultures. While analyzing the geopolitical situation in the South Caucasus, the fact that the region is a key element in Eurasia should be taken into account. This situation explains the activity of centers of global power in the region. The above mentioned fact has a direct influence on the region’s political actors’ activities, including the establishment of friendly or hostile relations between them.

At the beginning of the 21st century geopolitical processes assume a new character and radically different qualities. The new world order not only hasn’t reduced at all (and even eliminated) the risk bearing of the region, but has increased it. The article also discusses other issues related to the security of the South Caucasus and, particularly, the problem of providing the national security of Armenia.

In conclusion, it is underlined that many of the existing security risks in the region have a real potential of destabilizing the situation in the South Caucasus, while the situation is complicated by the fact that there are also ,,inertia” risks that have been relevant for decades.